

ԳԵՎՈՐԳ ՎԻՐԱԲՅԱՆ

Իրավագիտության մագիստրոս

**ԻՆԿՈՏԵՐՄՍ-Ը ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԻ՞, ԹԵ՞
ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**

Ինկոտերմսը, որպես առևտրային սովորության համակարգ, սաղմնային վիճակում ձևավորվել է դեռևս 17-18-րդ դարերում: Այն առաջին անգամ խմբագրվել է գրի է առնվել Միջազգային առևտրային պալատի կողմից 1936 թվականին, իսկ ներկայումս գործում է Ինկոտերմս 2010 խմբագրականը:

Ինկոտերմսի՝ որպես միջազգային առևտրային հարաբերությունները կարգավորող առանձին փաստաթղթի ի հայտ գալը և նրա հաջորդական փոփոխություններն ու լրացումներն առաջ են բերել վերջինիս իրավաբանական բնույթի նկատմամբ ոչ միատեսակ մոտեցումներ՝ ինչպես իրավաբանական դոկտրինայում, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայում: Արդյունքում, իրավաբանական դոկտրինայում Ինկոտերմսի իրավաբանական բնույթի վերաբերյալ ձևավորվել են երկու հիմնական մոտեցումներ: Մասնավորապես, ներկայումս հեղինակների մի խումբ գտնում է, որ այն առևտրային սովորույթ է, իսկ մյուսներն այն դիտարկում են որպես առևտրային սովորություն:

Ուստի, հաշվի առնելով այս և մի շարք հանգամանքներ՝ հեղինակը սույն գիտական հոդվածը նվիրել է Ինկոտերմսի իրավաբանական բնույթի հարցերի քննարկմանը: Քանի որ հեղինակը նույնպես հարում է այն իրավագետների մոտեցումներին, ովքեր Ինկոտերմսը դիտարկում են որպես առևտրային սովորույթ, այդ իսկ պատճառով էլ վերջինս (հեղինակն) իր առջև խնդիր է դրել Ինկոտերմսի իրավաբանական բնույթը քննարկման առարկա դարձնել անմիջապես «Ինկոտերմսը միջազգային առևտրային սովորույթների՞, թե՞ սովորությունների ժողովածու» հարցադրման տեսանկյունից: Իսկ եթե ավելի պարզ, ապա սույն հոդվածում հեղինակն առաջին անգամ հայրենական իրավաբանական դոկտրինայում առաջ է քաշում այն հիմնական չափանիշները, որոնք հնարավորություն են տալիս հստակ միմյանցից տարանջատել ինչպես առևտրային սովորույթն, այնպես էլ՝ վերջինիս առանձին դրսևորումը հանդիսացող Ինկոտերմսը առևտրային սովորությունից:

Սույն գիտական հոդվածը նախատեսված է լայն շրջանակի ընթերցողների, այն է՝ ինչպես իրավաբանների, այնպես էլ այս բնագավառով հետաքրքրվող այլ անձանց համար:

Հիմնաբառեր- Ինկոտերմս, կանոններ, առևտրային սովորույթ, սովորություն:

«Ինկոտերմսը միջազգային առուվաճառքի պայմանագրեր կնքելիս օգտագործվող այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը լայնորեն կիրառվում է ամբողջ աշխարհում: Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, Ինկոտերմսը նպաստում է առևտրի զարգացմանը՝ գործարքների աճող ծավալների և բարդությունների հաշվառմամբ: Առաջնալով առևտրային հարաբերությունների զարգացման հետ միաժամանակ՝ վերջինս ճշգրիտ կերպով սահմանել և սահմանում է վաճառողի և գնորդի պարտականությունները»,- ահա այսպես է սկսել շարադրել իր թեկնածուական ատենախոսությունը Օ.Վ. Ֆոնտովան: Բնական է, որ հեղինակի նշված դատողությունը ընթերցելուց (կամ լսելուց) հետո յուրաքայտիս մոտ պետք է միանգամայն ողջամիտ հարց առաջանա, այն է՝ իսկ ինչ է իրենից ներկայացնում Ինկոտերմսն (այսուհետ՝ նաև Կանոններ): Հարցադրում, որի վերաբերյալ 1936 թվականից սկսած մինչ օրս ինչպես իրավաբանական դոկտրինայում, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայում միասնական մոտեցում թերևս չի ձևավորվել, այլ կերպ ասած՝ «անժխտելի մի իրողություն», որը մանրակրկիտ քննարկման և վերլուծության կարիք ունի: Ուստի ասել, թե հնարավոր է Ինկոտերմսի վերաբերյալ Օ.Վ. Ֆոնտովայի դա-

տողությանն անդրադառնալ և այն ամբողջությամբ բացահայտել մեկ գիտական հոդվածի շրջանակներում, կարծում ենք, դա կլինի սույն աշխատանքի ձախողման ամենահիմնական և այն կոնցեպցիայի խեղաթյուրման պատճառներից մեկը, որը դրված է այս փաստաթղթի (Ինկոտերմս) հիմքում: Այդ դեպքում ո՞րն է խնդրի լուծման լավագույն տարբերակը:

Ինկոտերմսի՝ որպես միջազգային առևտրային հարաբերությունները կարգավորող առանձին փաստաթղթի ի հայտ գալը և նրա հաջորդական փոփոխություններն ու լրացումներն առաջ են բերել վերջինիս իրավաբանական բնույթի նկատմամբ ոչ միատեսակ մոտեցումներ՝ ինչպես իրավաբանական դոկտրինայում, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայում: Արդյունքում, դոկտրինայում Կանոնների իրավաբանական բնույթի վերաբերյալ ձևավորվել են չորս հիմնական մոտեցումներ: Մասնավորապես, հեղինակների մի մասը գտնում է, որ այն իրենից ներկայացնում է սովորություն, այդ թվում և՛ գործարար, և՛ առևտրային (Վ.Ա. Մուսին, Ն.Ի. Մակլաշևսկայա, Գ.Կ. Դմիտրևա, Վ.Վ. Վիտրյանսկի), երկրորդ խմբի հեղինակները գտնում են, որ այն իրենից ներկայացնում է *գործարար շրջանառության սովորույթ*, (Վ.Ֆ. Պոպոնդոպով, և

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Բ.Ի. Պուգինսկի, Վ.Վ. Կուդաշկին), երրորդ խմբի հեղինակների կարծիքով *առևտրային սովորույթ կամ միջազգային առևտրային սովորույթ* (Ա.Մ. Հայկյանց, Մ.Գ. Ռոզեմբերգ, Օ.Վ. Ֆոնոտովա, Մ.Մ. Բոգուսլավսկի Ն.Գ. Վիլկովա և ուրիշներ):

Իհարկե, յուրաքանչյուր ոք, ով առնչվել է կամ ապագայում կառնչվի Ինկոտերմսին, թերևս համակարծիք կլինի մեր այն տեսակետի հետ, որ Կանոնների իրավաբանական բնույթի վերաբերյալ հարցերն առաջնահերթ նշանակություն ունեն այս փաստաթուղթն «օգտագործողների» համար, ինչը, բնականաբար, հանդիսանում է այն հիմնական պատճառներից մեկը, որպեսզի առավել մանրամասն վերլուծության ենթարկենք վերջինիս իրավաբանական բնույթը, որի վերաբերյալ, ինչպես արդեն նշվեց սույն հոդվածը շարադրելիս, մինչ օրս միասնական մոտեցում չի ձևավորվել: Չի ձևավորվել և չի էլ ձևավորվի, քանի դեռ Ինկոտերմսի իրավաբանական բնույթն ընդհանրական ձևով կփորձեն, ինչպես դա սովորաբար արվում է հեղինակների կողմից, բացահայտել առանձին աշխատության մեկ պարագրաֆի՝ կամ հոդվածի շրջանակներում՝ թեկուզ այդ հոդվածը լինի բավականին ծավալուն: Հնարավոր չէ Ինկոտերմսի բնույթը բացահայտել նույնիսկ մեկ ամբողջական աշխատության շրջանակներում⁴: Մա իրավագիտության այն կարևորագույն հարցերից մեկն է (ներառյալ մյուս առևտրային սովորույթները և), որը պահանջում է անընդմեջ ուսումնասիրություն:

Ամենայն պատասխանատվությամբ հայտարարում ենք, որ այս հարցը Հայաստանի Հանրապետությունում պարզապես բարձրորդի վիճակում է: Պատմականորեն ձևավորված այս ֆենոմենի մասին հայրենական իրավագետներից թերևս միայն պրոֆեսոր Ա.Մ. Հայկյանցն է իր աշխատություններում մշտապես բարձրաձայնում⁵: Իհարկե, յուրաքանչյուր ոք, ով բարեխղճորեն ուսումնասիրել կամ ուսումնասիրում է հեղինակի կողմից գրված աշխատությունները, վերջինիս համար պարզ է դարձել կամ դառնում, թե ինչու է կայանում հեղինակի կողմից մշտապես արծածվող այդ իրավական երևույթի դերը և նշանակությունը միջազգային առևտրային հարաբերությունների իրավական կարգավորման ասպարեզում:

Ավելին, ԱՊՀ երկրների շրջանակներում միակ թեկնածուական աշխատանքը, որն ամբողջությամբ նվիրվել է Ինկոտերմսին, 2006 թվականին գրվել է Օ.Վ. Ֆոնոտովայի կողմից: 2006 թվականից մինչ այսօր չի գրվել որևէ ամբողջական աշխատանք, որտեղ Կանոնները կդիտարկվեին նաև այլ հարթության վրա, այն հարթության, որը չի արվել Օ.Վ. Ֆոնոտովայի կողմից: Իսկ ի՞նչ է մեզ մնում անել այսբանից հետո:

Հաշվի առնելով իրերի դրությունը՝ առաջարկում ենք սույն աշխատանքի շրջանակներում անդրադառնալ միայն այն հարցերին, որոնք մեզ հնա-

րավորություն կընձեռնեն պարզաբանելու՝ արդյո՞ք Ինկոտերմսը սովորույթ է, թե սովորություն: Այլ կերպ ասած՝ յուրաքանչյուր ոք, ով կփորձի Ինկոտերմսի իրավաբանական բնույթը դիտարկել այս տեսանկյունից, նրա գլխավոր խնդիրը կլինի վեր հանել միջազգային առևտրային սովորույթի ու սովորության միջև եղած տարբերությունները, տալ այն հարցի պատասխանը, որ Ինկոտերմսը ոչ թե առևտրային սովորություն է, այլ սովորույթ և որ այս երկու տերմիններն, ինչպես հաճախ դա արվում է որոշ հեղինակների կողմից առանձին աշխատություններում⁶, երբևէ չեն կարող նույնանալ:

Հարկ է նշել նաև, որ իրավաբանական դոկտրինայում «առավելապես» ընդունված է, իսկ պրակտիկայում հետզհետե առավել նախապատվություն է ձեռք բերում այն միևնույն, կամ այլ կերպ ասած, պրակտիկան ու գիտությունն իրար միավորող այն տեսակետը, համաձայն որի, Ինկոտերմսը ոչ թե պարզապես սովորույթ է, այլ սովորույթների ժողովածու: Ուստի, Կանոնների իրավաբանական բնույթի վերաբերյալ իրականությանը համապատասխանող պատկերացում ձևավորելու նպատակով հաշվի առնելով այս և այլ հանգամանքներ, որոնց մասին կխոսվի ներքոշարադրյալում, թերևս առավել նպատակահարմար գտանք սույն հոդվածը շարադրել «Ինկոտերմսը միջազգային առևտրային սովորույթների՞, թե՞ սովորությունների ժողովածու» վերտառությամբ, որի սահմաններում առաջարկում ենք վերջինիս «առևտրային սովորույթների ժողովածու» լինելու հանգամանքը չտարանջատել և գուցահեռ քննարկման առարկա դարձնել միջազգային առևտրային «սովորույթ» և «սովորություն» հասկացությունները պարզաբանելիս:

Ամենևին էլ չափազանցած չենք լինի, եթե խոստովանենք, որ անհնարին է գտնել միջազգային մասնավոր իրավունքին և առավել ևս նրա առանձին ինտիտուտը հանդիսացող «միջազգային առևտրային իրավունքին» կամ «արտաքին տնտեսական գործարքներին» նվիրված որևէ աշխատություն, որտեղ հեղինակները քննարկման առարկա դարձրած չլինեն միջազգային առևտրային «սովորույթ» և «սովորություն» հասկացություններն: Այլ կերպ ասած, եթե հարցը դիտարկելու լինենք մեր աշխարհաքաղաքական և տարածաշրջանային առանձնահատկությունների տեսանկյունից, ապա վստահորեն կարող ենք փաստել, որ դեռևս խորիրդային տարիներից սկսած մինչ օրս միջազգային մասնավոր իրավունքի դոկտրինայում միջազգային «առևտրային սովորույթ» եզրույթի կողքին ավանդաբար դիտարկում և գործածում են նաև «առևտրային սովորություն» կատեգորիան: Արդյունքում իրավաբանական դոկտրինայում նշված հարցի վերաբերյալ ձևավորվել է երկու հիմնական մոտեցում, այն է՝ ավանդական մոտեցումը, որը տարանջատում է առևտրային սովորույթ և սովոր-

րություն հասկացությունները, որի անվերապահ կողմնակիցներից ենք նաև մենք, և երկրորդ՝ ոչ ավանդական կամ որ նույնն է՝ «սովորույթ» և «սովորություն» կատեգորիաները մեկը մյուսին նույնական դիտարկող *ժամանակակից մոտեցումը*:

Հարկ է նշել, որ հայրենական իրավագիտությունում այս հարցը երբևէ քննարկման առակա չի դարձել և չկա որևէ աշխատանք, որը նվիրված կլինի միջազգային առևտրային սովորույթ և սովորություն հասկացությունների լուսաբանմանը: Հետևաբար և հաշվի առնելով իրերի դրությունը, ձևավորված մոտեցումներն այս երկու հասկացությունների վերաբերյալ՝ առաջարկում ենք խնդրի լուծման երկու տարբերակ:

- առաջին, կա՛մ մենք պետք է հիմք ընդունելով այն փաստը, որ Ինկոտերմսը դիտարկում ենք որպես միջազգային առևտրային սովորույթ և ոչ թե սովորություն, բավարարվենք միայն վերացական ձևով այս հասկացությունները տարանջատելով՝ առանձին հեղինակների դատողությունները մեջ բերելու միջոցով, որն ամենևին էլ խնդրի լուծման լավագույն տարբերակ չենք համարում, կա՛մ

- երկրորդ, առավել մանրամասն վերլուծության ենթարկել այս երկու հասկացությունները, նրանց միջև եղած տարբերությունները, սակայն ոչ թե ընդհանրական ձևով, ինչպես դա հաճախ արվում է առանձին աշխատություններում, այլ ուղղակիորեն խնդիրը դիտարկելով Ինկոտերմսի՝ որպես միջազգային առևտրային սովորույթ լինելու ասպեկտի տեսանկյունից:

Այլ կերպ ասած՝ պատասխանել հետևյալ հարցադրումներին՝ արդյո՞ք այս տարանջատումն ունի որևէ գործնական նշանակություն, թե սա ընդամենը գիտական երևակայության արդյունք է, Ինկոտերմսի՝ որպես առևտրային սովորույթի հատկանիշներն օգտագործելու միջոցով լուսաբանել՝ արդյո՞ք կան ռեալ հիմքեր Ինկոտերմսը դիտելու որպես առևտրային սովորույթ, և արդյո՞ք այդ հատկանիշները կարող են երբևէ վերաբերելի լինել նաև սովորությանը, թե ոչ: Թերևս որևէ արտառոց բան արած չենք լինելի, եթե ասենք, որ ընտրում ենք խնդրի լուծման երկրորդ տարբերակը և առաջարկում անցում կատարել վերջինիս դիտարկմանը:

Կատարված ուսումնասիրությունը ցույց տվեց, որ միջազգային առևտրային սովորույթ և սովորություն հասկացությունների տարանջատմանը կամ դրա անհրաժեշտության բացակայությանն իրենց աշխատություններում անդրադարձած այս բնագավառի խնդիրներով զբաղվող իրավագետներից յուրաքանչյուրն ընտրել է նշված եզրույթները մեկնաբանելու իր ձևերն ու եղանակները: Նպատակ չունենալով ամենևին էլ քննադատել նրանց աշխատածն՝ առաջարկում ենք խնդրի լուծման մեր *մոտեցումը*: Բնականաբար հարց է ծագում, իսկ ո՞րն է այն:

Միջազգային առևտրային սովորույթ և սովորություն

հասկացությունների տարբերակման անհրաժեշտության մասին իր աշխատություններում առավել մանրամասն անդրադարձել է խորհրդային ժամանակաշրջանի հայտնի քաղաքացիագետ, ազգությամբ ուկրաինացի Ի.Ս. Վիլյանսկին: Մասնավորապես, հեղինակը փորձել է նշված հասկացությունները միմյանցից տարանջատել՝ առանձնացնելով չորս հիմնական չափանիշներ: Թեև անցել են վաթսուներեք երկար ու ձիգ տարիներ, այնուամենայնիվ երևույթները դիտարկելու և քննարկելու հեղինակի այդ մոտեցումն ամենևին էլ չի կորցրել իր արդիականությունը: Ուստի, կիսելով խնդրի լուծման Ի.Ս. Վիլյանսկու այս գաղափարը և ելնելով սույն հոդվածի հիմքում դրված գլխավոր նպատակից՝ առաջարկում ենք Ինկոտերմսի տեսանկյունից վերը նշված հարցադրումներին պատասխանել՝ մանրամասն անդրադառնալով հեղինակի կողմից առանձնացված այդ չափանիշներից յուրաքանչյուրին առանձին-առանձին, իսկ անհրաժեշտության դեպքում նաև մեկ միասնության մեջ և պարզել՝ արդյո՞ք դա հնարավորություն կընձեռնի Ինկոտերմսը որպես սովորույթ տարանջատելու սովորությունից:

Նախքան հեղինակի կողմից առանձնացված առաջին չափանիշի քննարկմանն անդրադառնալը, ցանկանում ենք մեկ նախադասության շրջանակներում ուշադրություն դարձնել կարևոր մի հանգամանքի վրա: Մասնավորապես, յուրաքանչյուր ոք, ով չի զլանա և կուսումնասիրի հեղինակի «Սովորույթները և սոցիալիստական համակեցության կանոնները» վերտառությամբ աշխատությունը, միանշանակ կհամոզվի և համակարծիք կլինի մեր այն գաղափարին, որ առաջին չափանիշի էությունը հասկանալու համար առավել նպատակահարմար կլինի որոշ չափով տեղյակ լինել նաև երկրորդ չափանիշի մասին: Ուստի, առանց ժամանակ կոցնելու՝ առաջարկում ենք նախապես ծանոթանալ այդ երկու չափանիշներին և նոր միայն մանրամասն քննարկել դրանցից առաջինը: Իսկ թե ինչու, կհամոզվենք ստորև:

«Առաջին չափանիշի էությունը,- գրում է Ս.Ի. Վիլյանսկին,- կայանում է նրանում, համաձայն որի սովորույթի գոյության հաստատումը հանդիսանում է իրավունքի հարցը և մտնում է դատարանի պարտականության մեջ, իսկ սովորությունն, ի հակադրումն սովորույթի, մեկնաբանվում է որպես գործի փաստական հանգամանքներից մեկը, որը ենթակա է ապացուցման կողմերի կողմից դատարանի առջև»: Իսկ ահա երկրորդ չափանիշն առանձնացնելով՝ հեղինակն ուշադրությունը սևեռել է մեկ այլ հանգամանքի վրա՝ նշելով. «Սովորությունը կարող է կիրառվել, եթե գործարքի կողմերը գիտեն, կամ պետք է իմանան նրա գոյության մասին, իսկ սովորույթը, որպես իրավունքի նորմ, ենթակա է կիրառման անկախ նրա գոյության մասին կողմերի իմացությունից: Կոնտրադենտների

կողմից սովորությունների իմացությունն,- ըստ Ի.Ս. Վիլյանսկու,- անհրաժեշտ է այն կիրառելու համար, քանի որ սովորությունները դիտարկվում են որպես կողմերի կամահայտնության կազմում ընդգրկվող» :

Ի.Ս. Չիկինն իր թեկնածուական ատենախոսության մեջ, ընդհանուր առմամբ կիսելով Ս.Ի. Վիլյանսկու գիտական մոտեցումներն, այնուամենայնիվ կարծես թե փորձել է ժխտել հեղինակի կողմից առանձնացված առաջին չափանիշը՝ նշելով, որ համառոտական առևտրային արբիտրաժային կոմիսիայի պրակտիկայում տեղի է ունենում սովորությանի ապացուցում նաև կողմերի կողմից: Բացի այդ սովորության, ինչպես և սովորությունը կարող են հայտնի լինել դատարանին և արբիտրաժին, հետևաբար, վերջիններիս ապացուցման անհրաժեշտություն չի պահանջվի: Այդ դեպքում, Վ.Ի. Վիլյանսկու կողմից նշված այս հատկանիշն, ըստ հեղինակի, չի կարող հանդիսանալ սովորության և սովորությունը միմյանցից տարանջատելու չափանիշ :

Որքան էլ որ Իվան Սեմենովիչը կրկին փորձել է աչքի ընկնել իր նոր գաղափարներով, բոլոր դեպքերում հեղինակը մոռացության է մատնել կարևոր մի հանգամանք: Մասնավորապես, եթե խնդիրը դիտարկում ենք Ս.Ի. Վիլյանսկու կողմից առանձնացված առաջին երկու չափանիշների տեսանկյունից, ընդ որում, դա կլինի առաջին չափանիշի էությունը բացահայտելու լավագույն միջոց, ապա տեսնում ենք, որ այստեղ հարցն ամենևին էլ այն չէ, որ սովորությանի առկայությունը որոշ դեպքերում կարող է ապացուցվել նաև մասնակիցների կողմից կամ սովորության և սովորությունը կարող են հայտնի լինել դատարանին: Այդ դեպքում հարց է առաջանում՝ ի՞նչն է ցանկացել ցայտուն ձևով ընդգծել պրոֆեսորն՝ առանձնացնելով առաջին երկու չափանիշները:

Հեղինակի դատողությունների դիտարկումը նշված երկու (այդ թվում հաջորդ երրորդ և չորրորդ) չափանիշների տեսանկյունից թույլ է տալիս փաստելու, որ վերջինս սովորության և սովորություն հասկացությունների տարանջատման հիմքում դրել է նրանցից յուրաքանչյուրի իրավաբանական բնույթն՝ առաջինը դիտելով որպես իրավական նորմեր բովանդակող իրավունքի աղբյուր, իսկ երկրորդը՝ որպես հարաբերությունների կարգավորիչ, բայց ոչ իրավունքի աղբյուր և համապատասխանաբար ոչ իրավական նորմեր բովանդակող: Իսկ ահա «սովորության գոյության հաստատումը հանդիսանում է իրավունքի հարցը, իսկ սովորությունն, ի հակադրումն սովորությանի, մեկնարկվում է որպես գործի փաստական հանգամանքներից մեկը» առաջին չափանիշի միջոցով Ս.Ի. Վիլյանսկին ցանկացել է առավել հասկանալի ձևով ընդգծել սովորության և սովորության միջև առակա իրավաբանական բնույթի տարբերություններից մեկը: Ընդ

որում, խնդրի լուծման այս մոտեցումը, համաձայն որի, այս երկու կատեգորիաները պետք է տարբերել իրենց իրավաբանական բնույթով, պաշտպանվում է նաև այլ հեղինակների կողմից: Միակ տարբերությունը կարող է լինել միայն այն, որ վերջիններիս կողմից առաջ քաշված միջազգային առևտրային սովորության և սովորության իրավաբանական բնույթի տարբերություններն արտացոլող չափանիշները կարող են տարբերվել միայն իրենց ձևակերպումներով, բայց բոլոր դեպքերում, այդ չափանիշները մեր խորին համոզմամբ կոչված են պաշտպանելու Ս.Ի. Վիլյանսկու դատողությունները քննարկվող հարցի վերաբերյալ և էլ ավելի ամբողջական դարձնելու հեղինակի կողմից դեռևս 1954 թվականին ներկայացված չափանիշները: Ուստի, առաջարկում ենք համառոտ անդրադառնալ հեղինակներից մի քանիսին, իսկ այնուհետև Ինկուտերմսի իրավաբանական բնույթը դիտարկել Ս.Ի. Վիլյանսկու կողմից առանձնացված առաջին չափանիշի տեսանկյունից, որից հետո անցում կատարել հաջորդի քննարկմանը:

Այսպես, ռուսական իրականության ամենակարկառուն ներկայացուցիչներից Լ.Ա. Լունցն, իսկ նրա հետքերով նաև Մ.Մ. Բոգուսլավսկին և Վ.Պ. Չվեկովը, նշում են, որ. «...սովորությունները չեն հանդիսանում իրավակալն նորմեր՝ հետևաբար և իրավունքի աղբյուր ...» : Համանման մոտեցում է ցուցաբերում այս հարցում նաև Ի.Վ. Գետման-Պավլովան՝ նշելով. «Առևտրային սովորությունները իրավաբանական ուժ չունեցող միատեսակ, կայուն (հաստատուն) կանոններ են, իսկ սովորությանը,- գրում է Իրինա Վիկտորովնա Գետման-Պավլովան,- միջազգային առևտրային հարաբերություններ կարգավորող իրավական նորմ է» : Առավել ուշագրավ մոտեցում է ցուցաբերում Ա.Ա. Մերեժկոն: Մասնավորապես հետևելով դեռևս խորհրդային ժամանակաշրջանում լայն տարածում ստացած այն տեսակետին, համաձայն որի սովորությունն ի տարբերություն սովորությանի առավելապես կրում է տեխնիկական բնույթ¹², ըստ հեղինակի. «սովորությունն իրենից ներկայացնում է գործարքի առանձին դրվագները կարգավորելուն օժանդակող տեխնիկական կանոն» :

Այսպանից հետո հարց է առաջանում՝ արդյո՞ք կան լուրջ հիմքեր Ինկուտերմսը որպես առևտրային սովորության այս չափանիշներով տարանջատելու սովորությունից: Կատարված ուսումնասիրությունը մեզ թույլ է տալիս իրավացիորեն ասելու «այո»: Այն, որ սովորությանը հանդիսանում է իրավունքի հարցն, իսկ սովորությանը՝ գործի փաստական հանգամանքներից մեկն, այն, որ այս առաջին չափանիշը լիովին վերաբերելի է նաև Ինկուտերմսի իրավաբանական բնույթը բացահայտելուն, այդ մասին է վկայում նաև իրավակիրառ պրակտիկան: Ասվածը հիմնավորենք կոնկրետ օրինակներով:

Որպես սովորության գոյության ապացույց՝ ար-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տաքին տնտեսական գործարքներ կնքելիս մասնակիցները սովորաբար հետագա անախորժություններից խուսափելու նպատակով պայմանավորվում են, որ ապրանքների մատակարարումն իրականացվելու է ենթադրենք Ինկոտերմս 2010-ի FCA պայմաններով: Այս դեպքում բնական է, որ FCA տերմինը մեկանաբանելու համար անհրաժեշտ է ընդամենն անդրադառնալ Ինկոտերմս 2010-ին: Սակայն կարող է լինել նաև այնպիսի իրավիճակ, երբ կողմերը պայմանագրում ընդամենը կվկայվել են, որ մատակարարումն իրականացվելու է FCA տերմինով՝ առանց հիշատակելու «Ինկոտերմս» անվանումը: Նման դեպքում կարող է հարց առաջանալ՝ հնարավո՞ր է, որ արբիտրաժային դատարանն իր նախաձեռնությամբ այն մեկնաբանի որպես Ինկոտերմսի տերմիններից մեկը: Այս հարցադրմանը պետք է տալ դրական պատասխան՝ ասելով, որ իրականում միջազգային արբիտրաժային դատարանները պրակտիկայում հենց այդպես էլ վարվում են: Կասկածների տեղիք չտալու համար վկայակոչենք օրինակ 1999թ. միջազգային առևտրային արբիտրաժային դատարանի կողմից ռուսական և ալժիրյան ընկերությունների միջև ապրանքի մատակարարման վերաբերյալ CIP-Կուրսկ պայմաններով քննված վեճը: Այս գործի շրջանակներում արբիտրաժը հնարավոր համարեց, որ նույնիսկ հատուկ նշումի բացակայության դեպքում էլ CIP բազիսային պայմանը պետք է մեկնաբանել Ինկոտերմս 1990-ի իմաստով՝: Բերենք մեկ այլ օրինակ: Գործերից մեկով Միջազգային առևտրային պալատի արբիտրաժը մեկնաբանեց պայմանագրում բովանդակված delivered duty paid դրույթը (DDP): Կողմերից ոչ մեկը, համաձայն Բանգլադեշի իրավունքին, որին ենթակա էր պայմանագիրը, դատարանին չներայացրեց delivered duty paid հասկացությանը վերաբերող ապացույց: Նման պայմաններում արբիտրաժը նշեց. «Բանգլադեշի իրավունքում այս հարցի վերաբերյալ այլ բանի մասին ապացույցի բացակայության դեպքում, պայմանագրի համաձայն ապրանքի մատակարարման հայցվորի պարտականությունները որոշելու համար արբիտրաժը կարող է ղեկավարվել Ինկոտերմսով⁵ որպես միջազգային առևտրային սովորույթով»: Այսբանից հետո պարզապես մնում է Իվան Սեմենովիչին հարցնել՝ արդյո՞ք արբիտրաժը Ս.Ի. Վիլնյանսկու կողմից առանձնացված հենց առաջին չափանիշի հաշվին չէ, որ օրինակ DDP պայմանը տվյալ գործով հաստատել է Ինկոտերմսի՝ որպես առևտրային սովորույթի տերմիններից մեկը:

Առաջին չափանիշը քննարկելիս՝ զուգահեռ պարզ դարձավ, որ Ս.Ի. Վիլնյանսկու կողմից առանձնացված միջազգային առևտրային սովորույթը սովորությունից տարբերակելու երկրորդ չափանիշը կայանում է նրանում, ըստ որի՝ սովորությունը կարող է կիրառվել, եթե գործարքի կողմերը

զիտեն կամ պետք է իմանան նրա գոյության մասին, իսկ սովորույթը, որպես իրավունքի նորմ, ենթակա է կիրառման՝ անկախ նրա գոյության մասին կողմերի իմացությունից: Ընդհանուր առմամբ ընդունելով հեղինակի այս մոտեցումը, այնուամենայնիվ առաջարկում ենք խնդրի քննարկման մեր չափանիշը: Իսկ ինչո՞ւ, մի՞թե այս չափանիշը կորցրել է իր արդիականությունը: Իհարկե ոչ, պարզապես մեր առջև դրված խնդիրն այլ է: Մասնավորապես, եթե այս հարցը դիտարկելիք գրի չառնված սովորույթի տեսանկյունից, բնական է, որ անհրաժեշտ կլինեն մանրամասն վերլուծության ենթարկել հեղինակի՝ սովորույթը սովորությունից տարանջատելու երկրորդ չափանիշը: Մինչդեռ Ինկոտերմսի պարզապես դժվար կլինի հավատալ այն մտքին, որ կարող են լինել միջազգային առևտրով զբաղվող սուբյեկտներ, ովքեր տեղյակ չլինեն վերջինիս գոյության մասին: Բացի այդ նշված չափանիշն Ինկոտերմսի դեպքում առավել շատ վերաբերում է միջազգային առևտրային սովորույթի և սովորության կիրառման մեխանիզմներին: Այդ դեպքում արդեն այն համընկնում է երրորդ չափանիշին, այն է՝ սովորույթը հանդիսանում է իրավական, և կարող է կիրառվել որպես այդպիսին միայն օրենքում այդ մասին ուղղակի հղում անելու դեպքում, իսկ իրավական նորմ չհանդիսացող սովորության կիրառման համար չի պահանջում համապատասխան հղում օրենքում՝: Հետևաբար մեր պարագայում երկրորդը դիտարկել որպես ինքնուրույն չափանիշ և այդ տեսանկյունից քննարկել Ինկոտերմսի իրավաբանական բնույթը, համոզված ենք, որևէ նշանակություն ունենալ չի կարող: Այդ դեպքում ինչ է մեզ մնում անել:

Քանի որ մեր խնդիրն է Ինկոտերմսը որպես առևտրային սովորույթ տարանջատել սովորությունից, առաջարկում ենք երկրորդ չափանիշը ձևակերպել հետևյալ կերպ՝ միջազգային առևտրային սովորույթ և սովորություն հասկացությունների տարանջատումը՝ ելնելով նրանցից յուրաքանչյուրին բնորոշ հատկանիշներից և նրանց կիրառման մեխանիզմներից: Ընդ որում, այս երկու կատեգորիաներն ըստ իրենց հատկանիշների տարբերակելու չափանիշն առաջ ենք քաշում Օ.Վ. Աբլեզովայի՝ «Միջազգային առևտրային սովորույթը որպես Lex mercatoria-ի հիմնական աղբյուր» վերտառությամբ աշխատությունը մանրամասն ուսումնասիրելու արդյունքում՝:

Մասնավորապես, կատարված ուսումնասիրությունները հնարավորություն ընձեռնեցին առանձնացնելու Ինկոտերմսին (առևտրային սովորույթի) բնորոշ հետևյալ հատկանիշները, որպիսիք են՝ (արտաքին հատկանիշներ) վերջինիս միանգամայն պարզ լինելը, միատեսակությունը և վերջինիս համընդհանուր ճանաչումը, որպես ներքին հատկանիշ՝ համապարտադիրությունը, իսկ սանկցավորումը որպես կիսառման պայման: Բնական է, որ

www.journal.lawinstitute.am

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

այս դեպքում կարող է հարց առաջանալ՝ արդյո՞ք Ինկոտերմսի նշված հատկանիշները և նրա կիրառման պայմանը կարելի է վերագրել նաև սովորության: Իհարկե ո՛չ, իսկ ինչ՞ու: Պարզ է, որ այս հարցադրմանը պատասխանելու համար անհրաժեշտ է տալ սովորության հասկացությունը և թվարկել, թե որոնք կարող են լինել վերջինիս հատկանիշները:

Քննարկվող հարցի վերաբերյալ ուսումնասիրելով տասնյակից ավելի աշխատություններ՝ ականատես եղանք հետևյալ պատկերին. չնայած այն հանգամանքին, որ այս խնդրին իրենց աշխատություններում քննարկող հեղինակներից յուրաքանչյուրը, իր պատկերացումներից ելնելով, ցանկացել է տալ «սովորության» սեփական հասկացությունը, միևնույն է պետք է նշել, որ այդ բնորոշումները որքան էլ որ հեղինակները փորձել են տարբերվել միմյանցից, կա՛մ որոշ չափով համընկնում են, կա՛մ ամբողջությամբ հակասում: Օրինակ՝ նախահեղափոխական շրջանի իրավագետներից պրոֆեսոր Ա.Ի. Կամինկան գտնում էր, որ սովորությո՞ւն պետք է հստակ տարանջատել սովորությունից և այն բնութագրում էր հետևյալ կերպ. «Սովորությունները կիրառվում են ոչ թե նրանց պարտադիրությունը գիտակցելու ուժով, այլ նկատի է առնվում վերջիններիս նպատակահարմարությունը ...»¹⁸: Համանման մոտեցում է արտահայտել այս հարցի վերաբերյալ նաև նախահեղափոխական շրջանի մեկ այլ իրավագետ Պ.Պ. Տիտովիչը :

Ի.Ս. Չիկինը սովորությունը բնութագրել է որպես արտաքին առևտրի բնագավառում ձևավորված կանոններ²⁰, որոնք կողմերի հարաբերությունները կարգավորելու «ընդունակություն» են ձեռք բերում միայն այն դեպքում, երբ կողմերն իրենք են այս կամ այն ձևով ընդունել այդ կանոնների կիրառման հնարավորությունը :

Բայց քանի որ մեր խնդիրը ոչ թե քննադատելն է նշված, այդ թվում և մյուս հեղինակների կողմից տրված սովորության հասկացությունների ոչ իրավացիությունը, այլ ցույց տալու առևտրային սովորության ու սովորության տարբերություններն, ուստի ի մի բերելով կատարված ուսումնասիրությունների արդյունքում ձևավորված մեր դատողությունները՝ հանգում ենք հետևյալ եզրահանգման. *սովորությունները միջազգային առևտրային շրջանառությունում պայմանագրային կապերով միմյանց հետ կապված կոնկրետ գործընկերների միջև առաջացած կանոններ են, որոնք վերջինների միջև ձևավորվել են իրենց նպատակահարմարության, մատչելիության հատկանիշների և միևնույն գործողությունը թեկուզ մեկ անգամ կատարելու փաստի ուժով, որից հետո վերջիններիս կիրառման հնարավորությունը կարող է ուղղակիորեն նախատեսվել պայմանագրով կամ կարող է բխել կողմերի մտադրությունից: Այլ կերպ ասած՝ վերջինս հատկանիշներ որպես այդպիսին՝ կարող են լինել քաջառապես կողմերի համար նրա նպատակահարմարու-*

թյունը և մատչելիությունը:

Կարծում ենք՝ տրված բնորոշումից բոլորի համար էլ պարզ է դառնում, որ սովորությունն իր հատկանիշների տեսանկյունից երբևէ չի կարող նույնապես Ինկոտերմսի հետ և ամենևին էլ կարիք չկա այդ տեսանկյունից զուր տեղը զուգահեռներ անցկացնել նրանց միջև, ինչպես դա շատ հաճախ արվում է տարբեր հեղինակների կողմից, ու Կանոնները դիտարկել ոչ թե առևտրային սովորությունների, այլ՝ սովորությունների ժողովածու:

Ինչ վերաբերում է սովորության և սովորության տարբերակման Ս.Ի. Վիլյանսկու երրորդ չափանիշին, ապա հեղինակը վերջինիս միջոցով ցանկացել է մեկնաբանել միջազգային առևտրային սովորության և սովորության կիրառման մեխանիզմները: Մասնավորապես, հեղինակն այն ներկայացրել է հետևյալ կերպ. *առևտրային սովորությո՞ւն որպես իրավական նորմ՝ կարող է կիրառվել միայն օրենքում այդ մասին ուղղակի հղում անելու դեպքում:*

Այս ձևակերպումը հիմք ընդունելով որոշ հեղինակներ քննադատաբար են մոտենում նշված չափանիշին՝ պատճառաբանելով, որ վերջինս կարող է նեղացնել միջազգային առևտրային սովորության կիրառման հնարավորությունը²²: Բոլոր այն հեղինակներին, ովքեր քննադատում են այս չափանիշը, ընդամենը պետք է հուշել, որ Ս.Ի. Վիլյանսկին ամենևին էլ նկատի չի ունեցել այն հանգամանքը, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում օրենքում պետք է հղում կատարվի առևտրային սովորությո՞ւն կիրառելու հնարավորության մասին: Պարզապես հեղինակն առաջ է քաշել այն տեսակետը, համաձայն որի՝ միջազգային առևտրային սովորությո՞ւն համապարտադիրության ուժով կարող է օժտվել և կիրառվել որպես իրավական նորմ պետության կողմից սանկցավորվելու դեպքում: Հետևաբար, հասկանալու համար՝ արդյո՞ք պետությունը ճանաչում է սովորությո՞ւն որպես իրավունքի աղբյուր, բնական է, որ այդ մասին պետք է նշվի համապատասխան իրավական ակտում:

Ինչ վերաբերում է Ինկոտերմսին այս չափանիշի տեսանկյունից, ապա պետք է նշել, որ նույնիսկ կան պետություններ, որոնք առանձին իրավական ակտով ուղղակիորեն նշում են, որ Ինկոտերմսը ճանաչում են որպես միջազգային առևտրային սովորությունների ժողովածու²³ և իրենց իրավաբանական ուժով հավասարացնում են օրենքին: Իսկ սովորությունը, որը չի սանկցավորվում պետության կողմից, հետևաբար և չի հանդիսանում իրավական նորմ, կարող է կիրառվել, եթե դա ուղղակիորեն նախատեսվել է պայմանագրով կամ բխում է կողմերի մտադրությունից: Ընդ որում, վերջինիս կիրառման շուրջ վեճ առաջանալու դեպքում էլ կողմը, որը վկայակոչում է իրենց միջև ձևավորված կանոնի առակայությունը, կրում է նաև դրա զոյությունն ապացուցելու պարտականությունն: Իսկ նրանք, ովքեր համակարծիք չեն լինի մեր այս մոտեցմանը

www.journal.lawinstitute.am

և կփորձեն մեզ համոզել հակառակը, ստիպված պետք է լինենք մատնանշել գիտականորեն հակառակն ապացուցող ծանրակշիռ փաստարկներ:

Ուստի, նշված հանգամանքը հաշվի առնելով՝ նախքան հաջորդ չափանիշին անդրադառնալը, ցանկանում ենք վերջինիս քննարկումը սկսել հետևյալ հարցադրմամբ՝ կգտնվեն արդյո՞ք մարդիկ, ովքեր մինչև այս պահը չեն կիսի միջազգային առևտրային սովորույթը և նրա առանձին տարատեսակը հանդիսացող Ինկոտերմսը սովորությունից տարանջատելու վերը նշված չափանիշները կամ դրա նպատակահարմարությունը: Բնական է, որ այո՞, կգտնվեն: Ամենայն հավանականությամբ ժամանակին այս մասին մտորել է նաև Ս.Ի. Վիլյանսկին՝ առանձնացնելով չորրորդ չափանիշը, որն իր մեջ ամբողջությամբ ներառում, ամփոփում է առաջին երեք չափանիշները և մեկ անգամ ևս փաստում, որ միջազգային առևտրային սովորույթի և սովորության տարանջատումն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն:

Մասնավորապես հեղինակը շատ ճիշտ է նկատում, որ առևտրային սովորույթը սովորությունից տարանջատելու վերջին չափանիշի էությունն առավել ցայտուն դրսևորվում է միջազգային մասնավոր իրավունքում, և ըստ հեղինակի՝ կայանում է նրանում, որ անկախ այս կամ այն իրավունքի համակարգին պատկանելուց՝ կոլիզիոն նորմը կարող է առաջացած վեճը լուծելիս ապավինել միայն մեկ այլ իրավական նորմին, այն է՝ առևտրային սովորույթին, բայց ոչ երբեք իրավական նորմ չհանդիսացող սովորությանը²⁴: Իսկ արդյո՞ք մենք ունենք լուրջ հիմքեր պնդելու, որ կասկածի տեղիք չտվող այս չափանիշը վերաբերելի է նաև Ինկոտերմսին՝ որպես միջազգային առուվաճառքի հարաբերությունները կարգավորող սովորույթին:

Առանց որևէ տարակուսանքի պետք է նշել, որ այսօր Ինկոտերմսը դասվում է առևտրային իրավունքի ոլորտում միջազգային վեճերի լուծման ժամանակ միջնորդ դատարանների կողմից կիրառվող առավել կարևոր, հիմնարար միջազգային փաստաթղթերի շարքին՝ որպես նյութական իրավունքի աղբյուր և ուղղակիորեն վրա է հասնում օգնության այն ժամանակ, երբ օտարերկրյա իրավունքը չի տալիս վեճի առարկայի մեջ մտնող հարցի պատասխանը՝ և նույնիսկ պրակտիկական ցույց է տալիս, որ վեճը լուծող մարմիններն Ինկոտերմսը կիրառում են անկախ այդ մասին պայմանագրում որևէ հիշատակում արած լինելու հանգամանքից: Օրինակ՝ Ա.Պ. Բելովը, հիմք ընդունելով «Արտաքին առևտրական արբիտրաժի մասին» Եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասն, ըստ որի, արբիտրները կարող են ղեկավարվել պայմանագրի դրույթներով և առևտրային սովորույթներով, Ինկոտերմսի կիրառման մասին գրել է այսպես. «Վեճի լուծման ժամանակ արբիտրները կիրառում են Ինկոտերմսը, եթե պայմանագրի կողմերն այդ մա-

սին համաձայնվել են: Սակայն նույնիսկ նման համաձայնության բացակայության դեպքում էլ Ինկոտերմսը միջնորդ դատարանների կողմից կիրառվում է որպես նյութական իրավունքի նորմ՝ ապրանքի մատակարարման վաճառողի և գնորդի պարտականությունները որոշելիս»²⁶:

Ե.Վ. Լոմսկինան «Միջազգային կոմերցիոն հարաբերությունների ոչ պետական կարգավորում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության մեջ Ինկոտերմսը մեկնաբանում է հետևյալ կերպ. «Միջազգային առևտրային շրջանառությունում առավել հաճախ առևտրային տերմինների մեկնաբանման կանոնները դատարանները կիրառում են այն դեպքերում, երբ պայմանագրում կողմերը հղում չեն կատարել Ինկոտերմսի առանձին եզրույթներին²⁷ և վերջինիս ապավինում են՝ այն դիտարկելով որպես միջազգային առևտրային սովորույթի գոյության ապացույցներից մեկը»²⁸:

Մեկ անգամ ևս համոզվելու համար, որ Ինկոտերմսը երբևէ չի կարող նույնանալ սովորության հետ, և, որ Ս.Ի. Վիլյանսկու կողմից առանձնացված վերջին չափանիշն ամբողջությամբ վերաբերելի է նաև Կանոններին և մեկընդմիջ տալիս է բոլոր հարցերի պատասխանը, կարող ենք վկայակոչել նույնիսկ գերմանական և ֆրանսիական դատարանների մի շարք որոշումներ, որոնցում ուղղակիորեն նշվում է. «Ինկոտերմսը, որպես առևտրային սովորույթ, պետք է կիրառել անկախ այն բանից՝ կողմերը պայմանագրում հղում կատարել են այդ մասին թե ոչ և, պետք է դիտել կողմերի համար որպես օրենքի ուժ ունեցող»²⁹: Այլ կերպ ասած՝ ինչպես միջազգային, այնպես էլ ազգային հարթակներում թե՛ դատարանները, այդ թվում արբիտրները, թե՛ պայմանագրի կողմերը հակված են դիմելու Ինկոտերմսի՝ որպես միջազգային առևտրային շրջանառությունում ընդունված սովորության կանոններն արտացոլող հեղինակավոր աղբյուրի օգնությանը³⁰:

Այսպիսով, ընդհանրացնելով վերոգրյալը՝ կարող ենք փաստել.

- նախ Ինկոտերմսը, որպես գրի առնված առևտրային սովորույթ, հանդիսանում է իրավունքի աղբյուր, միչդեռ սովորությունը՝ կողմերի միջև ձևավորված կանոն է և վեճի դեպքում կարող է կիրառվել, եթե կողմը կապացուցի դրա գոյությունը,
- Ինկոտերմսին բնորոշ են այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են միանգամայն պարզ լինելը, միատեսակությունը, համընդհանուր ճանաչումը, իսկ սովորությանը՝ նպատակահարմարությունը և հարմարավետությունը,
- վերջապես Ինկոտերմսին ներհատուկ է այնպիսի հատկանիշ, ինչպիսին է համապարտադիրությունը, որը պետությունը նրան շնորհում է այն որպես իրավունքի աղբյուր ճանաչելով և կիրառվում է անկախ պայմանագրում այդ մասին որևէ հիշատակում անելուց, իսկ սովորությունը կարող է կի-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

րառվել, եթե գործարքի կողմերն այդ մասին ուղղակիորեն նշել են պայմանագրում կամ բխում է նրանց մտադրություններից:

Իսկ վերջում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ, այնուամենայնիվ, կգտնվեն մարդիկ, ովքեր չեն կիսի մեր տեսակետներն ու մոտեցումները, ցանկանում ենք սույն պարագրաֆը եզրափակել Վլադիմիր Ալեքսանդրովիչ Կանաշևսկու հետևյալ խոսքերով. «Այս արտակարգ կարևոր նշանակություն ունեցող հանգամանքներն անհրաժեշտ է հաշվի առնել Ինկոտերմսի իրավաբանական բնույթը հասկանալու համար, քանի որ այն չի կարող նմանվել պարզապես միայն առևտրային սովորույթների ժողովածուի, որը հնարավոր կլինի կիրառել բացառապես պայմանագրում նրա վերաբերյալ հղումի առկայության դեպքում՝ որպես պայմանագրի պայմանի. հակառակ դեպքում՝ մենք ստիպված պետք է լինենք խոսել միջազգային առևտրային սովորույթունների ժողովածուի մասին»³¹:

թը հասկանալու համար, քանի որ այն չի կարող նմանվել պարզապես միայն առևտրային սովորույթների ժողովածուի, որը հնարավոր կլինի կիրառել բացառապես պայմանագրում նրա վերաբերյալ հղումի առկայության դեպքում՝ որպես պայմանագրի պայմանի. հակառակ դեպքում՝ մենք ստիպված պետք է լինենք խոսել միջազգային առևտրային սովորույթունների ժողովածուի մասին» :

¹ Տե՛ս, Փոնտովա Օ.Վ., Применение Инкотермс в торговом обороте: Дисс. ... канд. юрид. наук. М.: 2006, С. 12.

² Տե՛ս, օրինակ Ломакіна Е.В., Негосударственное регулирование международных коммерческих отношений: Дисс. канд. юрид. наук: Челябинск 2015, С. 109-126, Зумбулидзе Р.-М.З. и Поротиков А. И., «Обычай в праве (сборник)» Юридический центр Пресс. Санкт-Петербург 2004, С. 130-132, Канапьевский В.А., Внешнеэкономические сделки: материально-правовое и коллизионное регулирования. Wolters Kluwer.: 2008, 234-239:

³ Տե՛ս, օրինակ Варгания А.М., Роль Инкотермс в договорных отношениях, www.tawar.scince:

⁴ Տե՛ս, օրինակ Корниенко О.В., Инкотермс-2000 с комментариями, СПб: Питер 2010, под ред. Галенской Л.Н., «Инкотермс», Фонотова О.В., Применение Инкотермс в международном и внутреннем торговом обороте. Монография. М.: Зерцало, 2008.

⁵ Տե՛ս, օրինակ Հայկյանց Ա.Մ., Ապրանքների միջազգային առուվաճառքի իրավական կարգավորումը, Եր., «Ասորիկ» 2011թ., էջ 295-302: Միջազգային մասնավոր իրավունք, Եր.: ԵՊՀ հրատ., 2013, էջ 75: Միջազգային գործարար շրջանառության սովորույթները և նրանց տեղը Հայաստանում: Իրավագիտության հարցեր, Եր., 2004թ., թիվ 3, էջ 59-65:

⁶ Տե՛ս, այդ մասին օրինակ Bainbrige S., Trade Usages in International Sales of Goods: An Analysis of the 1964 and 1980 Sales Covention // Virginia of International Law. 1984. N 8, էջ 624: Goldstajn A., Usage of Trade and Other Autonomous Rules of Internatioanl Trade According to the UN (1980) Sales Conversion // International Sales of Goods: Dubrovnik Lecture. - Peter Sarcevic and Paul Volken eds.: Oscan Publ., 1986, էջ 80: Под общ. ред. академика РАН Нерсиянца В.С., Проблемы общей теории и государства: учебник для вузов, М.: Норма 2004, С. 268.

⁷ Տե՛ս, Вильнянский С.И., Обычай и правила социалистического общезития // Ученые записки Харьковского института, 1954, С. 15.

⁸ Տե՛ս, Вильнянский С.И., նշված տեղում:

⁹ Տե՛ս, Зыкин И.С., Обычаи и обикновения в международной торговле: Дисс. канд. юрид. наук. М.: 1979, С. 22-23,

¹⁰ Տե՛ս, Лунц Л.А., Курс международного частного права: Общая часть. М.: «Юрид. Лит» 1973, С. 121, Звекон В.П., Международное частное право. Курс лекций, М.: Издательство Норма 2001, С. 97, Богуславский М.М., Международное частное парво. Учебник, М.: Юристь, 2006, С. 70.

¹¹ Տե՛ս, Гетьман - Павлова И.В., Международное частное право: Учебник, М.: Изд- во Эксмо, 2013, С. 203.

¹² Տե՛ս, այդ մասին «Марксистско-ленинская общая теория государства и права. Основные институты и понятия», С. 587 <http://www.studfiles.ru/preview/6018647/page:67/>:

¹³ Տե՛ս, Мережко А.А., Транснациональное торговое право (lex mercatoria). К.: Таксон, 2002, С. 44.

¹⁴ Տե՛ս, Канапьевский В.А., Внешнеэкономические сделки: материально-правовое и коллизионное регулирование. М.: Вол. Клувер, 2008, С. 236.

¹⁵ Տե՛ս, Grigera Naon N.A., Choice-of-Law Problems in International Commercial Arbitration, The Hague: Martinus Nijhoff Publishers. 2001, էջ 22:

¹⁶ Տե՛ս, Вильнянский С.И., նշված աշխատությունը, էջ 16:

¹⁷ Հեղինակի մոտեցումների մասին ավելի մանրամասն տե՛ս Аблезгова О.В., Обычай международной торговли как основные источники lex mercatoria // Журнал российского права N 4, 2008, С. 108.

¹⁸ Տե՛ս, Каминка А.И., Очерки торгового права- М.: АО «Центр Юринфор. Серия «Научное наследие» 2002, С. 81:

¹⁹ Տե՛ս, Цитович П.П., Учебник торгового права. Вып. I Киев: 1891, С. 36:

²⁰ Տե՛ս, Зыкин И.С., Обычай и обикновения в международной торговле: Дисс. канд. юрид. наук М.: 1979, С. 28:

²¹ Տե՛ս, Зыкин И.С., Теория lex mercatoria / Международное частное право. Современные проблемы. Под ред. Богуславского М.М., М.: 1993, С. 130:

²² Տե՛ս, Зыкин И.С., Обычай и обикновения в международной торговле: понятие, применение, формирование, применимое право и типовые контракты. М.: 1983, С. 26, 98-132:

²³ Տե՛ս, օրինակ Закон Украины «О внешнеэкономической деятельности» от 16.03.1991г. ВВРУ. 1991 N 29 <http://www.profiwins.com.ua/legislation/laws/105.html>:

- ²⁴ Տի՛ւ, Вильнянский С.И., նշված տեղում:
- ²⁵ Այդ մասին առաջին մանրամասն տե՛ս Գոնոտովա Օ.Վ., Применение Инкотермс в торговом обороте: Дисс. ... канд. юрид. наук. М.: 2006, С. 99- 114.
- ²⁶ Տի՛ւ, Белов А.П., Применение иностранного права международным коммерческим арбитражем // Право и экономика. 2001 N 7, С. 69.
- ²⁷ Տի՛ւ, Ломакина Е.В., Негосударственное регулирование международных коммерческих отношений Дисс. ... канд. юрид. наук. Челябинск 2015, С. 121.
- ²⁸ Տի՛ւ, օրինակ Սборник практики ЮНСИТРАЛ к Конвенции ООН о договорах международной купли-продажи товаров: UNCITRAL 2012 Digest of Case Law on the United Nations Convention on Contracts for the International Sale of Goods - New York: United Nations, 2012, С. 68, Final Award in Case 10418 (Paris, France. May 2000) // ICC International Court of Arbitration Bulletin, 2010, Vol. 21 No1, С. 63, Final Award in Case 7903 (Paris, France. September 1995) // ICC International Court of Arbitration Bulletin. 2010. Vol. 21, С. 74:
- ²⁹ Տի՛ւ, Spanolge J.A., Incoterms and UCC Article 2 Conflict and Confusion, 31 Int’l Law, 111, 113 (1997):
- ³⁰ Տի՛ւ, այդ մասին օրինակ Գոնոտովա Օ.Վ., նշված աշխատությունը, էջ 107:
- ³¹ Տի՛ւ, Канашевский В.А., Внешнеэкономические сделки: материально-правовое и коллизионное регулирование. М.: Вол. Клубер, 2008, С. 238:

Գեորգ Վիրաբյան
Магистр юриспруденции

РЕЗЮМЕ

Инкотермс: сборник международных торговых обычаев или обыкновений?

Инкотермс как коммерческая обычная система была сформирована в эмбриональной форме в 17-18 веках. Первый раз он был отредактирован и записан Международной торговой палатой в 1936 году, а в настоящее время действует редакция Инкотермс 2010.

Появление Инкотермс как отдельного акта, регулирующего международные коммерческие отношения, а затем его последовательное изменение и дополнение вызвали неоднозначное отношение к юридической природе Инкотермс как в научной доктрине, так и в юридической практике. В настоящее время в правовой науке Инкотермс принято рассматривать с позиции двух основных подходов к их нормативной природе: в качестве а) торгового обычая б) торгового обыкновения.

Поэтому, принимая во внимание это и ряд обстоятельств, автор посвятил эту научную статью обсуждению юридических вопросов Инкотермс. Поскольку автор также присоединяется к мнениям юристов, которые рассматривают Инкотермс как торговый обычай, последний (автор) поставил задачу учесть юридический характер Инкотермс в свете вопроса «Инкотермс: сборник международных торговых обычаев или обыкновений». Излагая более ясно, в этой статье автор впервые в отечественной правовой доктрине выдвигает основные критерии, которые позволяют явно отделять друг от друга, как торговый обычай, так и Инкотермс, в качестве единственного проявления последнего.

Эта научная статья предназначена для широкого круга читателей, таких как юристы и другие заинтересованные стороны в этой области.

Ключевые слова: *Инкотермс, правила, торговый обычай, обыкновение.*

Gevorg Virabyan
Master of Laws

SUMMARY

Incoterms: a collection of international trade custom or usage?

The Incoterm as a trade custom system has been formulated from 17th to 18th centuries. It was first edited and written down by International Chamber of Commerce in 1936, and currently “Incoterms 2010” term is operated.

The appearance of Incoterms, as a separate document regulating international trade relationships and its successive editions and amendments have brought unequal approaches to its legal nature both in legal doctrine and in law enforcement practice. As a result two main approaches to legal nature of Incoterms have been formulated in legal doctrine. In particular, now some authors claim that it is trade custom while others consider it as a usage.

Therefore, taking into consideration this and a number of circumstances, the author has devoted this article to the discussion of the legal issues of Incoterms. As the author is also of the lawyers approaches, who consider Incoterms as trade custom, the latter (the author) has set a task to put the legal nature of the Incoterms into a subject of discussion from the point of view of the following question: “Is the Incoterms a collection of international trade custom or usage?”

To say in other words, in this article, the author for the first time in legal doctrine puts forward the main criteria that give the opportunity to clearly disconnect trade custom and separate manifestation of Incoterms trade usage.

This scientific article is intended for wide range of readers, such as lawyers and other stakeholders in this area.

Keywords: *Incoterms, rules, trade custom, usage.*